



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Հայաստանի Հանրապետության Պետարքունիքի մարզի Երանոս համայնք
ՀՀ, Պետարքունիքի մարզ, գ.Երանոս, (0262) 6-00-73, (093) 33-07-37 yeranos.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015թվականի N 40-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԵՔ ՄԻԱԿՈՐ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, հիմք ընդունելով Երանոս գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 11-ի N 50-Ա որոշումը՝

որոշում եմ.

1. Երանոս համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող երեք միավոր հողամասերն ուղղակի վաճառքի կարգով օտարել «Քարծրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին. Օտարվող հողամասերի տվյալներն են՝

Հ/Հ	Հողամասի գտնվելու վայրը և հասցեն	Կադաստրային ծածկագիրը	Մակերեսի չափը		Նպատակային նշանակությունը	Հողատեսքը կամ գործառնական նշանակությունը	Սեփականության իրավունքի վկայականի համարը	Ուղղակի վաճառքի գինը
			հա	քմ				
1	Գյուղ Երանոս, Սարի թաղ, թիվ 17	05-055-0259-0210	0,02404	240,4	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	Էներգետիկայի օբյեկտների հողեր	N 15042015-05-0014	(60000x0,0057=342x240,4 =82216,8)ՀՀ դրամ
2	Գյուղ Երանոս, Սարի թաղ, թիվ 37	05-033-0260-0140	0,01752	175,2	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	Էներգետիկայի օբյեկտների հողեր	N 23102015-05-0017	(60000x0,0057=342x175,2 =59918,4)ՀՀ դրամ
3	Գյուղ Երանոս, Սարի թաղ, թիվ 41	05-033-0259-0208	0,01887	188,7	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	Էներգետիկայի օբյեկտների հողեր	N 23102015-05-0016	(60000x0,0057=342x188,7 =64535,4)ՀՀ դրամ

Օտարվող հողամասերի մակերեսի չափը՝ 0,06043 հեկտար կամ 604,3 քառակուսի մետր, համայնքի բյուջե մուտքագրվող գումարի չափը՝ 206670,60 (երկու հարյուր վեց հազար վեց հարյուր յոթանասուն դրամ վաթսուն լումա) ՀՀ դրամ.

2. Աշխատակազմի քարտուղար Ժ. Փինաչյանին՝

1) <<Բարձրավույտ էլեկտրացանցեր>> ՓԲԸ-ի կողմից համայնքի բյուջե 206670,60 (երկու հարյուր վեց հազար վեց հարյուր յոթանասուն դրամ վաթսուն լումա) ՀՀ դրամ մուտքագրելուց հետո հանձնարարել աշխատակազմի համապատասխան աշխատակիցներին ապահովելու սույն որոշումից բխող գործառույթների փաստաթղթային ձևակերպումները և օտարվող հողամասերի սեփականության իրավունքի փոխանցման գույքային պետական գրանցման աշխատանքները

2) հանձնարարել աշխատակազմի առաջատար մասնագետ Մելիք Քարամյանին համայնքի հողային հաշվեկշռում արտացոլել կատարված փոփոխությունները և այն ներկայացնել համայնքի ավագանու առաջիկա նիստի հաստատմանը

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՊԵՏՆԱԿ ՄՈՎՍԵՍՅԱՆ